ՆՈՐԱՅՐ ՂԱՋԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

ՀՈԳԵՒՈՐ ԳԱՐՆԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹԸ «ՅԱՃԱԽԱՊԱՏՈՒՄ ՃԱՌՔ»-ՈՒՄ ԵՒ «ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ»-ՈՒՄ

Հոգեւոր գարնան ավանդույթը հայ դպրության մեջ սկզբնավորվել է «Յաճախապատում ճառք»-ում եւ ավելի ընդարձակ շարադրվել Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց»-ում զետեղված «Վարդապետութիւն»-ում:

Նպատակ չունենք քննելու «Յաճախապատում ճառք»-ի հեղինակային խնդիրը, ինչի մասին շատ է գրվել: Միայն նշենք, որ «Յաճախապատում» ճառերի հեղինակ կարող էին լինել տարբեր անձինք: Այդ հիմնավորվում է նրանով, որ «յաճախապատում», ըստ ՆԲՀԼ-ի, նշանակում է «յաճախաբան», «ճառք եւ մեկնութիւնք վարդապետականք, որպիսին է մատեան Լուսաւորչին...» (էջ 318): Ճառը, ուրեմն, քարոզ է, վարդապետություն, երկար զրույց, ներբող: Գրիգոր Լուսավորչի «Յաճախապատում ճառք»-ը անվանվել է նաեւ «Վարդապետութիւնս»՝ «Սրբոյ Գրիգորի հայոց Լուսավորչի ասացեալ ճառս յաճախապատումս եւ լուսաւոր Վարդապետութիւնս յաղագս աւգտի լսողաց»:

Ագաթանգեղոսը Գրիգոր Լուսավորչին է հիշատակում «Յաճախապատում ճառք»-ի հեղինակ, Կորյունը՝ Մաշտոցին: Երկուսն էլ ճիշտ են, որովհետեւ Լուսավորիչը եւ Մաշտոցը զբաղվել են վարդապետական մեկնությամբ, քարոզով, «երկար զրույցով», ներբողով:

Եւ եթե Կորյունը Մաշտոցին գիտի որպես հաճախապատում ճառերի հեղինակ, ապա խոսքը «Վարդապետութեան» մասին է, քանզի այն եւս ճառերի, քարոզների, ներբողների, վարդապետական մեկնությունների, «երկար զրույցների» գիրք է, ինչպիսին է Լուսավորչի «Յաճախապատում ճառք»-ը, միայն թե Լուսավորչի ամեն մի ճառի վրա գրված է՝ «Երանելւոյն սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւորչի»:

Այժմ վերադառնանք քննվող խնդրին՝ «Յաճախապատում ճառք»-ում եւ «Վարդապետութիւն»-ում հոգեւոր գարնան ավանդույթի սկզբնավորմանը:

Մ. Աբեղյանը «Հայոց հին գրականության պատմություն» աշխատության մեջ, անդրադառնալով «Յաճախապատում ճառք»-ին, նրանում մատնանշում է հոգեւոր գարնանը վերաբերող հատվածը՝ «Որ սաստիկ ունի զվէրս մեղաց... բազում ջանք (եւ) ջերմեռանդ արտասուօք եւ բեկումն սրտի... ի ներքս բերիցէ առ ի լուծանել զդժնդակ ձմեռն խստութեան մեղացն. զի գարունն հոգեւոր երեւեսցի ի շնչել հարաւոյ ջերմութեան հոգւոյն: Եւ ի վերուստ սաստիկ անձրեւով... որ(պէս) երկիր զբոյսս եւ զծաղիկս բացայայտէ, եւ տունկք՝ զսաղարթս եւ զպտուղս առ ի վայելս թագաւորաց եւ ռամկաց, որովք զուարճանան,– սոյնպէս եւ որ ջերմութեամբ հոգւոյն զհոսանս արտասուացն հեղու եւ լուծանէ զկապանս ձմեռնային մեղացն, արձակին բոյսք առաքինութեանն եւ պտուղք արդարութեան տնկոյն, որով ուրախանան երկնաւորք եւ երկրաւորք ի փառս Աստուծոյ»:[1]

«Յաճախապատում ճառք»-ը հոգեւոր գարունը ներկայացնում է որպես հավատի եւ մաքուր սիրո, առաքինության եւ արդարության ժամանակ: Ահա նմանօրինակ մեկ այլ հատված. «Եւ հրով Հոգւոյն հալել զձմեռնային խստութիւն սառնամանեաց ջերմեռանդ արտասուաք: Եւ արձակել արմատս զքաղցր սրբութիւն եւ զանոյշ խոնարհութիւն եւ զբարի հնազանդութիւն ամենայն ճշմարտութեամբ ի Քրիստոս: Եւ բարձրացուցանէ զոստս հաւանութեան հաւատով յամենայն առաքինութեան աճմունս որպէս ծառս՝ որ տնկեալ են ի գնացս ջուրց: Որ մեծաւ ցանկութեամբ ի շնորհացն Աստուծոյ շարժին վտակք արտասուացն, որով մաքրին երեւելիք եւ աներեւոյթք. եւ խաղաղ եւ հեզ ցաւղով արբուցանէ զտունկս եւ զբոյսս զկանուխ եւ զանազան. եւ յորդորէ զամենայն անդամսն յաճումն արդարութեան ի լաւն եւ յառաւելն...»[2]:

Հոգեւոր գարնան խորհուրդը «Յաճախապատում ճառք»-ի եւ «Վարդապետութեան» միասնական տեղիներից մեկն է:

«Վարդապետութիւն»-ում հոգեւոր գարնան նկարագրությունը ավելի մեծ տեղ է զբաղեցնում: Այնտեղ այն անվանվում է Մեծ Գարուն, որը «զօրինակ մարդկան յարութեան մեռելոցն ուսուցանէ»: Հարության արձագանքը հնչում է «Մատեան ողբերգութեան» երկում.

Յորժամ անմահն աստուած յարուցեալ փառաւք,
Ընդ իւր նորոգեաց զբնաւ մահացեալս... (ԿՁ, զ)

«Յաճախապատում ճառք»-ում եւ «Վարդապետութիւն»-ում մեղքի եւ անմեղության խորհրդանիշը փուշը եւ դալար խոտն են («Եղիցին մեղաւորք

1 **Մ. Աբեղյան,** Երկեր, հ. Գ., Երեւան, 1968, էջ 144:
2 «Մատենագիրք հայոց», հ. Ա., Ե. դար, Անթիլիաս, 2003, էջ 75:

իբրեւ զփուշ այրեցեալք եւ ընկեցեալք», «Իսկ դալարովքն խնամարկեալ կենդանի ջրովն յարքայութեանն յայն գարուն նորոգեալ պարարեսցէ»: Երբ մարդը մեղքերով է թաղվել, փուշը շրջապատում է գերեզմանը: Դրան հակառակ, արդար ննջեցյալի հետ հարության ժամանակ «բուսանին... արդարութիւնքն»:

Հոգեւոր գարնան խորհուրդը «Յաճախապատում ճառք»-ից եւ «Վարդապետութիւն»-ից անցել է հետագա հայ բանաստեղծությանն ու պատմագրությանը: Առաջին հերթին նկատի ունենք Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունը, հատկապես «Մատեան»-ը, որտեղ օգտագործվել է փուշ եւ դալար բույս հակադրությունը: Բերենք մի քանի օրինակ.

...Ի յանդաստանէ մաւրն սեւեկի փուշս
դժնկի մեղաց շառաւիղի...
Զի՞արդ ոչ կոչեցից զանձն իմ գարշելի անդաստան՝
Անիծաբեր փշովք մեղաց հեղձեալ: (ՁԳ., գ)
Մի յայտնեսցին փուշք, մեղանաց ի սրբութիւնս մտացս... (ՀԸ., գ)

«Յաճախապատում ճառք»-ում հանդիպում ենք «Զանիծիցն զտատասկ մեղացն...» կապակցությանը: «Փուշք մեղացն» արտահայտությունն օգտագործված է Անանիա Նարեկացու «Յաղագս զղջման եւ արտասուաց» խրատում՝ «այրին փուշք մեղացն ի զաւրութենէ արտասուացն»:

«Մատեան ողբերգութեան»-ն են անցել ավետարանական սկիզբ ունեցող, «Յաճախապատում ճառք»-ի եւ «Վարդապետութեան» ոչ քիչ պատկերներ, ինչպես ասենք, փուշ եւ դալար բույս հակադրության կողքին «անպտուղ մարդկան» օրինակ հանդիսացող թզենին (Թ, բ եւ ԼԶ, բ):

Ծառս ամբարձուղեշ, ստուարաստեղն,
Տերեւալից՝ ունայն ի պտղոց,
Նմանակից յաւէտ հարազատ այնր թզենւոյ,
Զոր տէրն գոսացոյց (Թ., բ):

Նարեկացին մեկ անգամ չէ, որ օգտագործում է «գաւսացի»-ն: Ահա, օրինակ, ԿԶ,ե հատվածից.

Ի զատութենէ ընշանիդ լուսոյ խլեալ գաւսացի...

Իսկ «Վարդապետութիւն»-ում թզենու մասին այսպես է ասված՝ «արդ՝ ոչ զրադատ ինչ զայն գօսութիւն ծառոյն հասուցանէր...»:

«Մատեան»-ի Թ,բ գլխում անպտուղ ծառի օրինակի հետ բերվում է «բազմապատիկ բերք չմատուցած», «ցողով ոռոգուած» հողի օրինակը (ինչպես թզենին):

Թզենու պատկերին հանդիպում ենք Թ,բ-ի հետագա՝ 30-33 տողերում եւ ՁԱ. գլխում:

Զի եթե ապաժաման յանգգոյշ ժամուն
Հերապանծ տունկն պտղակորոյս, անկենդան,
Որ դոյզն պատկեր է անպատրաստից
Եկն ընդ անիծիւք (Թ,բ):

Որք եւ պտղակորոյս տնկոյ թզենւոյն՝
եռամեանն դատարկութեամբ... (ՁԱ)

Թզենու օրինակակիցն է ձիթենին՝ «Իւղընձիւղ փայտս պտղակորոյս (Հատանելի ծառս ունայնաբոյս) Կրկնամեռ խաւսուն տունկս անյոյս...» (ԼԹ, բ):

Մարգարեությունների եւ Ավետարանների առանձին տողեր ու պատկերներ, որոնք առկա են «Վարդապետութիւն»-ում, օգտագործված են «Մատեան»-ում: Այսպես, օրինակ, «ո՞վ եդ լերինս ի կշիռս, եւ զդաշտս կշռորդ եբարձ» (մարգարեության տող է՝ օգտագործված «Վարդապետութիւն»-ում):

Մեջբերված տողի հիմամբ «Մատեան»-ում կերտվել է Թ,ա-ի հետեւյալ մեծանշանակ մասը.

Նա զի թէ զմայրս Լիբանանու ի մի լուծ կշռոց զաւդեցից,
Եւ կամ զլեառն Արարատեան
Ի կէտ ամբարձման նժարի միոյ
Արդարութեան միջնորդ կացուցից,
Ոչ հաւասարէ այնր հարթութեան համազուգակցել:

«Մատեան»-ի ՁԸ,գ-ից մեջբերենք մի հատված, որն ավելի ուղղակի է առնչվում «Վարդապետութեան»-ը, որտեղ նշվում է, որ հոգեւոր գարնանը «միանգամայն կազմեցին զոսկերօքն չորացելովք՝ միսքն եւ ջիղքն..»:

Եւ թագաւորեսցեն կեանքդ շնորհաց ողորմութեան Քոյ, Քրիստոս,
Ի գանձս պահեստի ոսկերացն ցամաքելոց,
Որով ի ժամանակս կենդանականս,–
Սկզբնաւոր լուսոյ մտի գարնանոյն՝
Նորոգման աւուրն պայծառութեան՝
Քոյովդ ցաւդով յոգի ահեցեալ
Այսու փրկութեամբ անմահականաւ
Եւ անցամաքելի վերամբարձութեամբ
Շառաւիղս ձգեալ իմանալեացն բարեաց՝
Դարձեալ դալարեցայց եւ կրկին ծաղկեցայց
Ըստ քոյինաշունչ Գրոյն յուսադրութեան:

Բանաստեղծը հավատացած է, որ Քրիստոսի ողորմության շնորհիվ կյանքը պիտի թագավորի «ցամաքած ոսկորների գանձարանի պահեստում»: «Վարդապետութիւն»-ում «ցամաքած ոսկորների» դիմաց «չորացած ոսկորներ» են: Հարության հավատը նույնն է՝ «միանգամայն կազմիցին զոսկերօքն չորացելովք՝ միսքն եւ ջիղքն եւ աճառքն եւ նեարդքն, մորթովքն զգեցեալք եւ մազովքն զարդարեալք»: «Վարդապետութիւն»-ում Եզեկիելի՝ չորացած ոսկորների միմյանց միանալու եւ կյանք ստանալու մասին խոսքն օգտագործվում է եւս մեկ անգամ՝ «Ի միտ առ եւ զաստվածահրաման գործոցն զօրութիւն ի վերայ թանձրախառն ոսկերացն հնացելոց, թէ որպէս առ իւրաքանչիւր յօդս յարեալք եւ պատուաստեալք եւ կենդանացեալք՝ կանգնեցան կացին...»[3]:

ՁԸ. գ-ի «Քոյովդ ցաւղով յոգի աճեցեալ» տողը կապված է «Վարդապետեան» «...աստուածական ցողովն ի մեծ գարունն պարարեալք» կապակցության հետ: Անանիա Նարեկացին աստվածային ցողի փոխարեն բնական ցողն է դիտում բույսի զվարթության միջոց. «Եւ զոր աւրինակի ցաւղոյ զուարթանա բոյս, Այսպէս եւ յարտասուաց զուարթանայ հոգին» («Ցաղագս զղջման եւ արտասուաց» խրատ): «Վարդապետութիւն»-ում նշվում է, որ հուր է վառվելու՝ հալեցնելու, այրելու, վերացնելու ամենայն մարդկանց մեղքերը: Գրիգոր Նարեկացին «Գանձտետր»-ի ԴԲ փոխում ունի տողեր՝ սառը մեղքերը հոգու հրով հալեցնելու մաղթանքով.

Սառնացեալ մեղաւք անձանց մերոց մաղթել
Հրով Հոգւոյն ծագմամբ զնոյն ի հոգւոց հալել:

Հրաչյա Թամրազյանը «Գրիգոր Նարեկացին եւ Կիլիկիայի բանաստեղծական արվեստի դպրոցը» (Երեւան, 2007) աշխատության մեջ ներկայացնում է հայ բանաստեղծության էջեր՝ հոգեւոր գարնան ավանդույթի բազմազան դրսեւորումներով, եւ այդ ամենը՝ Նարեկյան դպրոցի փորձի շրջանակում: Նա անդրադառնում է Անանիա Նարեկացու «Ցաղագս զղջման եւ արտասուաց» խրատին եւ մատնանշում խրատի կապը Լուսավորչի ճառերի հետ («Նարեկյան դպրոցը», Եր., 1999):

Խոսրով Անձեւացին «Մեկնութիւն ժամակարգութեան» գրքում հոգեւոր գարնան խորհուրդը տեսել է Լուսավորչի ճառում. «Կամ որպէս Սուրբ Լուսաւորիչն զգարունն ի գալուստն Քրիստոսի օրինակեալ, ցուցանէ զբարի ցուցումն բարեաց՝ բուսովք տնկովք ծաղկովք հոտովք, համով մրգոցն եւ երեւմամբ բիւրազգի ծաղկաց եւ որ ի նոցանէն հեշտութիւնք աչաց եւ քմաց եւ ճաշակելեաց:

3 «Վարդապետութիւն», էջ 278:

Իսկ մեղացն յայտբերումն՝ զանազան փշովք եւ վնասակար բուսովք, յորս ասէ, ընդ քեզ բուսանին զորս ընդ քեզ թաղեցեր, արդարութիւնքն կամ մեղքն»[4]:

Խոսրով Անձեւացին, Լուսավորչի ճառ ասելով, «Յաճախապատում»-ի փոխարեն ի նկատի է ունեցել «Վարդապետութիւն»-ը, քանզի նրա կողմից մեջբերումը ուղղակի քաղվածք չէ, այլ ընդամենը վերարտադրություն է «Վարդապետութիւն»-ից է: Ուրեմն՝ Անձեւացին «Վարդապետութիւն»-ը համարում է Լուսավորչի գործը: Սա ասում է Ժ. դարի հեղինակը, իսկ մեր ժամանակներում, ցավոք, փորձում են Լուսավորչի գրական ժառանգությունը նրանը չհամարել: Անանիա Նարեկացին «Գիր խոստովանութեան» երկում գրում է Լուսավորչի վարդապետության (ուսմունքի – Ն.Ղ.) մասին. «Կամ զինչ եւ իցէ մարդ ի վիճակէ սրբոյն Գրիգորի, եւ արտաքոյ նորա վարդապետութեանն խորհիցի կամ ուսուցէ... յաւրինութենէն հեռի եղիցի»[5]:

Ինչեւէ, զուգահեռենք Խոսրով Անձեւացու մեջբերումը եւ «Վարդապետութեան» համընկնող տեղիները: Մեջբերում. «Բուսովք տնկովք, ծաղկովք հոտովք, համով մրգոյն եւ երեւմամբ բիւրազգի ծաղկաց»: «Վարդապետութիւն». «Եւ ոչ երբէք փոխեն զգոյնս գոյնս ծաղկանցն, համոցն եւ հոտոցն եւ տերեւոցն», «... բոյսով, համով, հոտով, բողբոջով, ծաղկով եւ պտղով»:

Մեջբերում. «Իսկ զմեղացն յայտնաբերումն զանազան փշովք եւ վնասակար բուսովք»: «Վարդապետութիւն». «... մեղօք թաղեցար... ընդ քեզ բուսեալք ի քո գարունն փուշքն...»:

Վերադառնանք Անանիա Նարեկացու «Յաղագս զղջման եւ արտասուաց» խրատ-«Յաճախապատում ճառք»-«Վարդապետութիւն» կապին:

Զոր աւրինակ գայ ձմեռն
Եւ ի խստաշունչ սառնամանեացն խամրացեալ՝
Մեռանին ամենայն բոյսք եւ ծաղիկք դալարուտանք,
Իսկ դու, ամենակալ,
Ի ժամանակի գարնանոյն ցաւղեա անձրեւ,
Առաքեա ջերմութիւն հարաւոյ,
Հալին սառնամանիք ձմերանոյն,
Յառնեն դարձեալ ի մեռելոց
Եւ նորոգին վերստին
Զանազան վայելչութիւնք ծաղկանց...

4 **Խոսրով Անձեւացի,** Մեկնութիւն ժամակարգութեան, Օրթագյուղ, 1840, էջ 34:
5 «Մատենագիրք հայոց», հ. Ժ., Ժ. դար, Երեւան, 2011, էջ 652:

Իւրաքանչիւրքն առանձին զհոտ արձակեն...
Դու ի կամաց քոց առնես զարուն
Եւ զնոսա նորոգես.-
Իսկ ես, կենդանի գոլով
Եւ ստեղծեալ ի քո պատկերդ,
Մեղանչելով յաճախ՝
Արարի ինձ ձմեռն խստաշունչ,
Խամրեցան ծաղիկք առաքինութեան իմոյ:
Այժմ աղաչեմ, բարերար,
Արա՛ ինձ գարուն հոգեւոր,
Հալածեա՛ զսառնամանիս մեղաց իմոց,
Ցաւդեա՛ ի սիրտ իմ անձրեւ ողորմութեան,
Առաքեա՛ զջերմութիւն հարաւոյ երկիւղի քո ի հոգի իմ,
Այսու փրկութեամբ անմահականաւ
Եւ անցամաքելի վերամբարձութեամբ
Շառաւիղս ձգեալ իմանալեացն բարեաց՝
Դարձեալ դալարացայց եւ կրկին ծաղկեցայց
Ըստ քոյինաշունչ գրոյն յուսադրութեան:

Ուշադիր լինելով կնկատենք, որ «Ցաղագս զղջման եւ արտասուաց» խրատի հիմքում թե՛ «Ցաճախապատում ճառք»-ն է եւ թե՛ «Վարդապետութիւն»-ը: Վերջինիս հետեւյալ տողերը յուրովի են արտացոլվել խրատում. «Ծառոցն բոյսք բողբոջոյն գարնանւոյն երեւեսցին յետ ձմերանւոյն», «գարնանւոյն յետ հնութեան ձմերանւոյն բերիցեն», «ցուցանեն զժամանակ վարուց կենաց ուրախութեան մարդկան», «ուստի եւ ձայն ազդոյ փողոյն յարութեանն հարկանիցի», «Սոյն օրինակ եւ յարութիւն մեռելոց»:

«Ցաղագս զղջման եւ արտասուաց» խրատը իմաստով եւ բառապատկերային հյուսվածքով ակնբախորեն նման է «Ցաճախապատում ճառք»-ին:

Հալածեա զսառնամանիս մեղաց իմոց... (խրատ)
Լուծանէ զկապանս ձմեռային մեղացն,
«Զդժնդակ ձմեռն խստութեան մեղացն» («Ճառք»)
Ցողեա՛ ի սիրտ իմ անձրեւ ողորմութեան... (խրատ)
Եւ ի վերուստ սաստիկ անձրեւով զհոտանս արտասուաց («Ճառք»)
Առաքեա՛ զջերմութիւն հարաւոյ... (խրատ)
Զի գարունն հոգեւոր երեւեսցի ի շնչել

հարաւոյ ջերմութեան հոգւոյն... («Ճառք»)
Արա զսիրտ իմ ընդունարան արտասուաց (խրատ)
Ջհոսանս արտասուաց հեղու... («Ճառք»)

Հոգեւոր գարնան ներշնչանքն անթաքույց է Գրիգոր Նարեկացու «Մեկնութիւն «Ո՞վ է դա»-ի հետեւյալ հատվածում. «... նորին զորութեամբ հալեսցուք պատրաստեալ անձրեւն երկնաւոր, հոսեալ ի բերանոյ Որդւոյն Աստուծոյ, զաւետարանական լուսաւոր գիտութիւնս արբցուք, իբրեւ զծարաւիս, եւ զանապատացեալ անձինս մեր կանաչազգեստս եւ ծաղկածինս եւ զշաւիղս ցողոյ սրբութեամբ մեր...»[6]:

«Ով է դա»-ի մեկնության այլ հատվածներում եւս Գրիգոր Նարեկացին ապավինում է հոգեւոր գարնան խորհրդին, փոխաբերաբար ներկայացնում «հեթանոսների անապատների»՝ Սուրբ Հոգու զորությամբ դալարացումը. «... դալարացան այսպիսի երկնաբուղխ եւ լուսաշիթ անձրեւ(աւ)ք անապատք հեթանոսաց եւ կանաչզգեստք եղեն եւ լուսազգեստք՝ աւազանաւն, եւ պայծառացան եկեղեցաբոյս ուղխիւ քաղցրութեան ճաշակով դալարացեալ մեղացն ձմեռնային չորութենէ... եւ յագեցան լիապէս կենդանական անձրեւին առատութեամբ եւ զուարթացան ծաղկախիթ պայծառութեամբ ի փշազգածն թառամութենէ»[7]:

Գրիգոր Նարեկացին հոգեւոր գարնան խորհրդի պատկերն է օգտագործել «Սուրբ Յակոբ Մծբնայ բան նուիրական գովեստի» ներբողում. «... ի գեղեցկատեսն ոստոց ընձիւղեալ... ի յամպոց մաքրոց անձրեւեալ, ի նորոգ գոյութեանց ցաւղեալ, ի յելիցն արեւու փայլեալ... յաջողակն հողմոց զարբացեալ...»[8]:

Հոգեւոր գարնան խորհուրդը գրավել է նաեւ միջնադարի մեր երեւելի մյուս բանաստեղծին՝ Կոնստանդին Երզնկացուն: Նրա համառոտյալ անվամբ «Գարուն» բանաստեղծության մասին Մանուկ Աբեղյանը գրում է. «Գարնան նկարագիրը նա անում է իբրեւ օրինակ Քրիստոսի, ինչպես ասում են, «երկրորդ գալստեան»... Մեղավորների համար բերված չոր ու անպիտան, լավ պտուղ չտվող ծառերը, փուշն ու հրով այրելը... ինքնուրույն գյուտեր չեն»[9]:

Աբեղյանն ակնարկում է «Վարդապետութիւն»-ից բերված տող-պատկերները:

6 «Մատենագիրք հայոց», հ. ԺԲ., Ժ. դար, Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 909:
7 Անդ, էջ 890:
8 Անդ., էջ 992:
9 **Մ. Աբեղյան,** հ. Դ., Երեւան, 1970, էջ 360-361:

Հոգեւոր գարնան խորհուրդը, որը հայ հայրաբանական գրականության մեջ ծավալուն տեղ է գրավել, չէր կարող չթափանցել պատմագրություն: Այդ է վկայում Եղիշեի «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին» երկը, որն ավարտվում է «Տիկնայք փափկասունք Հայոց աշխարհին» հատվածով: «Բազում ձմերաց հալեցան սառնամանիք. եհաս գարուն եւ եկին նորեկ ծիծռունք. տեսին եւ խնդացին կենցաղասէր մարդիկ...»: Եղիշեն պատմում է արդարների կրած նեղությունների, նրանց ժուժկալության, նեղություններին համբերելու, Աստծո սիրո համար փորձությունները տանելու մասին, ինչը «Վարդապետութեան» պատգամներից է:

Փափկասուն տիկինները «...անպտուղ ճպռանց նմանեցին, որ երգոցն քաղցրութեամբ առանց կերակրանաց կեան...», «Արտաքնոցն երեւէին, իբրեւ սգաւորք եւ չարչարեալք եւ մխիթարեալք երկնաւոր սիրով»:

Եղիշեի երկում հոգեւոր գարնան բովանդակած գլխավոր իմաստը փորձությունների հաղթահարմամբ Աստծո սիրուն արժանանալն է, այդ սիրո, առաքինության եւ արդարության հարակցությունն է: Նույն խորհուրդն է «Յաճախապատում ճառք»-ում. «Այլ որք մտերմութեամբ կացին մնացին համբերութեամբ յամենայնս նեղութիւնս...»:

Հոգեւոր գարնան խորհուրդն ամփոփված է Գրիգոր Նարեկացու «Վասն ուղիղ հաւատոյ եւ մաքուր վարուց առաքինութեան» խրատում այսպես. «Որք թէպէտ եւ մեղաւորք են, այլ խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ սրբեալ՝ մոտենան յիս ճաշակմամբ ի ճշմարիտ կենդանութիւնս եւ յիս բնակին, եւ ես՝ ի նոսա, որ թէեւ մարմնով մեռանին, այլ զսերմն ճշմարիտ կենացս յինքեան ունելով, ի հոգեւոր գարունն՝ որ է հասարակաց յարութիւն՝ բողբոջեալ վերանորոգին ճշմարիտ եւ անմահ կենդանութեամբ, ոչ առնելով զդառնաշունչ հոգւոց մահուն ճաշակ հաւիտեան»[10]:

РЕЗЮМЕ

Традиция духовной весны в армянской литературе ознаменована созданием “Строматов Св. Григория Просветителья” и более обширно представлена в “Учении”, вошедшем в труде Агатангелоса “История Армении”.

“Строматы” представляют традицию духовной весны в качестве времени чистой любви, веры, справедливости и добродетели.

10 «Մատենագիրք հայոց», հ. ԺԲ., Ժ. դար, Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 1030:

В “Учении Св. Григория” изображение традиции духовной весны занимает более значительное место. В нем она именуется Великой весной, которая учит примеру воскрешения умерших.

Символика духовной весны “Стромата” и “Учения” проявилась в последующих поэтических произведениях и в историографии, в особенности в “Книге скорбных песнопений” Григора Нарекаци. К примеру, в одной из глав (89:3) “Книги” автор прямо ссылается на “Учение”, где отмечается, что во время духовной весны “иссохшие мощи и жилы ожили”.

В “Книге” используются пророческие и евангельские образы, которые имеются в “Учении”. В статье приведены соответствующие образцы.

Проведенное исследование выявило, что автор 10-го века Хосров Андзеваци считал “Учение” произведением Григория Просветителя.

Пафос духовной весны ощутим в назиданиях и одах Гр. Нарекаци, полное отражение он нашел в 5-ом веке в поэтике Егише.

SUMMARY

Spiritual spring tradition in the works of Armenian historiographers is sourced from “Stromates of Saint Gregory the Illuminator” and more broadly presented in “Teaching of Saint Gregory”, a part of “History of Armenia” written by Agathangelos.

“Stromates” represents the tradition of spiritual spring as a time of pure love, faith, justice and virtue.

The description of spiritual spring has much more important role in “Teaching”. Here it is referred to as Great Spring, which gives the example of resurrection.

Symbolism of spiritual spring passed from “Stromates” and “Teaching” to further poetic and historiography works, especially the “Book of Lamentations” by Gregory of Narek. For example, chapter 88.3 of the “Book of Lamentations” directly refers to “Teaching”, which mentions that “dry bones and muscles” revitalize during the spiritual spring.

“Book of Lamentations” contains prophecy images and descriptions from Gospels that are available in “Teaching”. The article gives relevant examples.

The research revealed that the 10th century writer Khosrov Andzevatsi considered “Teaching” one of the works authored by Gregory the Illuminator.

The pathos of spiritual spring is perceivable in Gregory of Narek’s books of edifications and odds, and it was totally reflected in the 5th century poetics of Yeghishe.